Հավելված N 7
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 26-ի N 774 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՅՈՒՏԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԵՐԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՔԱՂՎԱԾՔԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՋ ՆՇՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանված է «Արտոնագրերի մասին», «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքների (այսուհետ՝ Օրենքներ) պահանջների համաձայն գյուտերի և կարճաժամկետ արտոնագրով պահպանվող գյուտերի (այսուհետ՝ սույն գլխում՝ գյուտեր), արդյունաբերական դիզայնների պետական գրանցման, պետական գրանցամատյանի վարման և գրանցամատյանում ընդգրկվող տվյալների ցանկի, պահպանական փաստաթղթեր տալու և դրանք ուժի մեջ պահելու, գրանցամատյանում փոփոխություններ կատարելու և քաղվածքներ տրամադրելու հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով:

2. Սույն կարգում օգտագործված են Օրենքներով սահմանված հասկացությունները:

3. Գյուտերի, արդյունաբերական դիզայնների գրանցումը համապատասխան պետական գրանցամատյանում և դրանց վարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմի-կայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ):

4. Պետական գրանցամատյանները տվյալների էլեկտրոնային հիմնապաշար են, որոնք ներառում են տվյալներ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած օբյեկտների, ինչպես նաև տրված փաստաթղթերի մասին, որոնք հաստատում են արտոնագրատերերի իրավունքները գրանցված օբյեկտների նկատմամբ:

5. Պետական գրանցամատյանները պարունակում են նաև տվյալներ Օրենքների համաձայն համապատասխան գրանցամատյանում և տրված փաստաթղթերում կատարված փոփոխություն-ների մասին:

6. Պետական գրանցամատյանում գյուտի, արդյունաբերական դիզայնի գրանցման թվական համարվում է պաշտոնական տեղեկագրում դրանց արտոնագրերի մասին տեղեկությունների հրապարակման թվականը:

7. Ցանկացած անձի դիմումի համաձայն, որին կցված է համապատասխան տուրքի վճարման անդորրագիրը, Գրասենյակի պետական գրանցամատյանների բաժինը քաղվածքներ է տալիս պետական գրանցամատյաններից՝ դիմումն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այն տվյալների, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրու-թյան համաձայն հրապարակման ենթակա չեն:

8. Գյուտի և արդյունաբերական դիզայնի արտոնագրերը մասնակիորեն կարող են երկարաձգվել, ինչպես նաև դադարեցվել կամ անվավեր ճանաչվել: Գյուտի արտոնագրի դեպքում երկարաձգվում կամ դադարեցվում կամ անվավեր են ճանաչվում գյուտի հավակնության սահմանման համապա-տասխան անկախ կետը կամ կետերը: Հավակնության սահմանման անկախ կետը չի կարող երկարաձգվել կամ դադարեցվել կամ անվավեր ճանաչվել մասնակիորեն: Եթե գյուտի արտոնա-գիրը երկարաձգվում կամ դադարեցվում կամ անվավեր է ճանաչվում մասնակիորեն, ապա այն շարունակում է ուժի մեջ մնալ հավակնության սահմանման այն անկախ կետերով որոշվող ծավալով, որոնք չեն երկարաձգվել կամ չեն դադարեցվել կամ անվավեր չեն ճանաչվել՝ պայմանով, որ դրանք կարող են լինել առանձին արտոնագրի առարկա: Արդյունաբերական դիզայնի արտոնագրի դեպքում՝ համալիր (բարդ) իրի արտոնագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել կամ դադարեցվել կամ անվավեր ճանաչվել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակիորեն՝ միայն դրանց որոշ բաղադրիչների նկատմամբ: Մեկից ավելի արդյունաբերական դիզայնների արտոնագրի գործողու-թյան ժամկետը կարող է դադարեցվել կամ անվավեր ճանաչվել կամ երկարաձգվել նաև դրանց մի մասի համար: Արտոնագրտիրոջ դիմումի համաձայն արտոնագրով տրված իրավունքները մասնակի դադարեցվելու դեպքում արտոնագրատերը պետք է Գրասենյակ դիմում ներկայացնի գյուտերի կամ արդյունաբերական դիզայնների պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու մասին և պետք է վճարի օրենքով սահմանված պետական տուրքը:

2. ԳՅՈՒՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

9. Ըստ արտոնագրերի հերթական համարների, որոնք ըստ էության գյուտերի գրանցման համարներն են, գյուտերի մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերի ՄՍՀԿ ST.9 ստանդարտին համապատասխան, Գրասենյակի գյուտերի ընթացիկ հիմնապաշարից գործավարության ծրագրով գրանցամատյան են տեղափոխվում հետևյալ մատենագիտական տվյալները՝

1) (11) արտոնագրի համարը.

2) (13) փաստաթղթի (արտոնագրի) տեսակի կոդը.

3) (21) հայտի գրանցման համարը.

4) (22) հայտի գրանցման (ներկայացման) թվականը.

5) (31) առաջնային հայտի համարը.

6) (32) առաջնային հայտի ներկայացման թվականը.

7) (33) առաջնային հայտի ներկայացման երկրի կոդը.

8) (45) արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը.

9) (51) միջազգային արտոնագրային դասակարգման ցուցիչը.

10) (54) գյուտի անվանումը.

11) (57) հավակնության սահմանումը.

12) (62) ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատվել է հայտը.

13) (65) հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը.

14) (71) տեղեկություններ հայտատու(ներ)ի մասին (անունը, ազգանունը, անվանումը, հասցեն, երկրի կոդը).

15) (72) տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին (անունը, ազգանունը, հասցեն, երկրի կոդը).

16) (73) տեղեկություններ արտոնագրատիրոջ մասին (անունը, ազգանունը, անվանումը, հասցեն, երկրի կոդը).

17) (74) տեղեկություններ արտոնագրային հավատարմատարի մասին, եթե այն նշված է դիմումում.

18) (85) միջազգային հայտն ազգային փուլ փոխադրելու թվականը.

19) (86) միջազգային հայտի համարն ու ներկայացման թվականը.

20) (87) միջազգային հայտի հրապարակման համարն ու թվականը.

21) (98) նամակագրության հասցեն:

10. «Արտոնագրերի մասին» օրենքի (այսուհետ սույն գլխում՝ օրենք) համաձայն արտոնագիր տալու մասին որոշման հիման վրա արտոնագիր տալու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարման դեպքում Գրասենյակը գյուտը գրանցում է համապատասխան պետական գրանցամատյանում և տալիս է արտոնագիր: Գյուտը պետական գրանցամատյանում գրանցելու և արտոնագիր տալու համար Գրասենյակի պետական գրանցամատյանների բաժինն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

1) որոշում է արտոնագրի համարը.

2) գրանցում (ներմուծվում) են գյուտի մատենագիտական տվյալները.

3) որպես արտոնագրի հրապարակման թվական նշում է այն պաշտոնական տեղեկագրի հրապարակման թվականը, որի մեջ զետեղված են տվյալ գյուտի արտոնագրի մասին տեղեկությունները.

4) պատրաստում (լրացնում) է արտոնագիրը և այն հանձնում (առաքում) է արտոնագրատիրոջը կամ նրա ներկայացուցչին.

5) լրացվում են արտոնագրի տրման (առաքման) մասին տեղեկությունները (թվականը և ստացողի կամ հասցեատիրոջ անունը, ազգանունը, անվանումը, առաքման տվյալները):

11. Տեղեկությունների հրապարակումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, պետական լիազոր մարմինն արտոնագրատիրոջը կամ նրա ներկայացուցչին հանձնում է (անհրաժեշտության դեպքում՝ ուղարկում է փոստով) արտոնագիրը:

12. Գրանցման ենթակա գյուտերի արտոնագրերի համարները որոշելու և դրանց մասին տեղեկությունները Գրասենյակի պաշտոնական տեղեկագրի հերթական համարում հրապարակելու նպատակով, Գրասենյակի գյուտերի հայտերի գործավարության ընթացիկ հիմնապաշարից գրանցման ենթակա գյուտերը ծրագրով դասավորվում են ըստ Միջազգային

արտոնագրային դասակարգման և ստանում են հերթական համարներ՝ սկսած գրանցամատյանում վերջինը գրանցված գյուտին տրված արտոնագրի համարին հաջորդող համարից:

13. Եթե հեղինակի (համահեղինակների) մասին տեղեկություններն օրենքի համաձայն պաշտոնական տեղեկագրում չեն հրապարակվում, ապա գրանցամատյանում համապատասխան ազգանուն(ներ)ից հետո կատարվում է «չի հրապարակվում» գրառումը:

14. Բաց լիցենզիա տալու մասին դիմում ստանալու, ինչպես նաև բաց լիցենզիա տալու մասին դիմումը հետ կանչելու վերաբերյալ դիմում ստանալու դեպքում, եթե դիմումին կցված է համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը, համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանի տվյալ արտոնագրի էջում, և այդ մասին տեղեկություն է հրապարակվում Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում, ինչի մասին ծանուցվում է արտոնագրատերը: Եթե դիմումը ներկայացվել է առանց համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի, կամ վճարված տուրքը չի համապատասխանում սահմանված չափին, ապա արտոնագրատիրոջը հարցում է ուղարկվում համապատասխան չափով տուրքի վճարման անդորրագիրը եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ: Պահանջված անդորրագիրը եռամսյա ժամկետում չներկայացնելու դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

15. Գրանցամատյանի վարման ընթացքում պետական գրանցամատյանների բաժինը գրանցամատյան է մուտքագրում հետևյալ տեղեկությունները՝

1) պետական գրանցամատյանում տեղ գտած ակնհայտ և տեխնիկական սխալներն ուղղելու մասին.

2) Գյուտը պետական գրանցամատյանից հանելու մասին՝

ա. գյուտի գրանցումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու մասին,

բ. արտոնագրատիրոջ դիմումի համաձայն արտոնագրով տրված իրավունքները ամբողջությամբ դադարեցնելու մասին.

գ. արտոնագիրը գործողության մեջ պահելու համար տարեկան տուրքը սահմանված ժամկետում չվճարելու պատճառով արտոնագրով տրված իրավունքները դադարեցնելու մասին.

դ. արտոնագրի ժամկետը լրանալու մասին.

3) գյուտի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու կամ դադադարեցնելու մասին.

4) արտոնագրատիրոջ կողմից արտոնագիրն ուժի մեջ պահելու համար տարեկան տուրքերը վճարելու և իրավունքների տրամադրման ժամկետը ամբողջությամբ կամ մասնակիորեն երկարաձգելու մասին.

5) արտոնագրի գործողությունը վերականգնելու մասին.

6) գյուտի նկատմամբ իրավունքների փոխանցման մասին գրանցված պայմանագրի մասին.

7) գրանցված լիցենզային (ենթալիցենզային) պայմանագրի մասին.

8) գրանցված ֆրանչայզինգի պայմանագրի մասին.

9) գրանցված լիցենզային կամ ֆրանչայզինգի պայմանագրում կատարված փոփոխություն-ների մասին.

10) գրանցված լիցենզային կամ ֆրանչայզինգի պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին.

11) բաց լիցենզիայի մասին հայտարարություն հրապարակելու մասին.

12) արտոնագրատիրոջ անվան, ազգանվան, հայրանվան, անվանման, և(կամ) բնակության (կամ գտնվելու վայրի) հասցեի փոփոխության, արտոնագրատիրոջ ներկայացուցչի անվան, ազգանվան, հայրանվան, անվանման, և(կամ) բնակության (կամ գտնվելու վայրի) հասցեի փոփոխության, մասին.

13) ներկայացուցչի փոփոխության կամ նոր ներկայացուցիչ նշանակելու մասին.

14) արտոնագրի կրկնակ տալու մասին.

15) այլ փոփոխությունների մասին:

16. Սույն կարգի 15-րդ կետին համապատասխան գրանցամատյանում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում կամ կայքէջում:

17. Ըստ սույն կարգի 15-րդ կետում նշված գործողությունների, գյուտերի պետական գրանցամատյանում գրառումները կատարվում են հետևյալ տեքստերով՝

1) գրանցամատյանում տեղ գտած ակնհայտ և տեխնիկական սխալներն ուղղելու դեպքում՝

ա. «ՈՒղղված է ակնհայտ (տեխնիկական) սխալը (նշվում է ճիշտ գրառումը).

Հիմքը՝ (նշվում է համապատասխան հիմքը և դրա ստացման թվականը).

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:»:

2) գյուտը պետական գրանցամատյանից հանելու դեպքում՝ «Գյուտը հանվել է պետական գրանցամատյանից _____ թվականից,

հիմքը՝

ա. դատարանի վճռի հիման վրա արտոնագիրն ամբողջովին անվավեր է ճանաչվել (նշվում է դատական գործի համարը, վճռի թվականը, ուժի մեջ մտնելու թվականը), կամ՝

բ. չի վճարվել տարեկան պետական տուրքը, կամ՝

գ. արտոնագրատիրոջ _____թվականի դիմումը, կամ

դ. լրացել է արտոնագրի գործողության ժամկետը:

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

3) արտոնագիրը մասնակիորեն անվավեր ճանաչվելու կամ դադարեցվելու դեպքում՝

ա. «Արտոնագիրը մասնակիորեն անվավեր է ճանաչվել (նշվում է դադարեցման ծավալը):

Հիմքը՝ դատարանի վճիռը (նշվում է դատական գործի համարը, վճռի թվականը, ուժի մեջ մտնելու թվականը):

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը», կամ՝

բ. «Արտոնագրով տրված իրավունքները մասնակիորեն (նշվում է դադարեցման ծավալը) դադարեցվել են (թվականը):

Հիմքը՝ արտոնագրատիրոջ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

4) արտոնագրատիրոջ կողմից տարեկան տուրքերը վճարելու և իրավունքների պահպանության ժամկետը ամբողջությամբ կամ մասնակիորեն երկարաձգելու դեպքում՝

ա. «Արտոնագիրը գործում է մինչև (թվականը), կամ՝

Արտոնագիրը (նշվում է երկարաձգված ծավալը) գործում է մինչև (թվականը):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը (գրությունը):

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

5) արտոնագրի գործողությունը վերականգնելու դեպքում՝

«Արտոնագրի գործողությունը վերականգնվել է (թվականից)։

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը։

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը։

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը։».

6) գյուտի նկատմամբ իրավունքների փոխանցման մասին պայմանագիրը գրանցելու դեպքում՝

«Արտոնագրատերը (անունը, ազգանունը, անվանումը) և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն) գյուտի նկատմամբ իրավունքները ամբողջությամբ կամ մասնակի (նշվում է փոխանցվող ծավալը) փոխանցել է պայմանագրով (գրանց. N, թվականը)։

Նոր արտոնագրատեր՝ (անունը, ազգանունը, անվանումը) և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն)։

Հիմքը՝ պայմանագիրը գրանցելու մասին որոշում, №, (առաքման կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները)։

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը։

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը։».

7) լիցենզիան (ենթալիցենզիան) ամբողջությամբ կամ մասնակի գրանցելու դեպքում՝

«Լիցենզիան (ենթալիցենզիան) (գրանց. № , թվականը) գործում է մինչև (թվականը), կամ՝

Լիցենզիան (ենթալիցենզիան) (նշվում է ծավալը) (գրանց. № , թվականը) գործում է մինչև (թվականը)։

Լիցենզառու (ենթալիցենզառու) (անունը, ազգանունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն)։

Լիցենզայի տեսակը՝ բացառիկ (հասարակ, հարկադիր)։

Հիմքը՝ լիցենզիան գրանցելու մասին որոշում կամ դատարանի որոշում, ծանուցագիր № , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները)։

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը։

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը։».

8) ֆրանչայզինգի պայմանագիրը գրանցելու դեպքում՝

«Ֆրանչայզինգը (ենթալիցենզիան) (գրանց. № , թվականը) գործում է մինչև (թվականը):

Լիցենզառու (ենթալիցենզառու) (անունը, ազգանունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն):

Լիցենզայի տեսակը՝ բացառիկ (հասարակ):

Հիմքը՝ լիցենզիան գրանցելու մասին որոշում, ծանուցագիր № , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները):

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

9) լիցենզիայում (ենթալիցենզիայում) կամ ֆրանչայզինգի պայմանագրում կատարված փոփոխությունները գրանցելու դեպքում՝

«Փոփոխություն (գրանց. № , թվականը), (լիցենզիայի, ենթալիցենզիայի կամ ֆրանչայզինգի (գրանց. № , թվականը) պայմանագրում:

Պայմանագրի գործողությունը երկարաձգված է մինչև (թվականը):

Հիմքը՝ փոփոխության (ների) գրանցման մասին որոշում (գրանց. № , թվականը), ծանուցագիր № , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները):

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

10) լիցենզիան կամ ֆրանչայզինգի պայմանագիրը չեղյալ հայտարարելու դեպքում՝

«Լիցենզիայի, ենթալիցենզիայի կամ ֆրանչայզինգի (գրանց. № , թվականը) պայմանագիրը չեղյալ է հայտարարվել (թվականից),

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը (կողմերի համատեղ ստորագրած փաստաթուղթը, դատարանի վճիռը և այլն),

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

11) բաց լիցենզիայի մասին հայտարարություն հրապարակելու դեպքում՝

«Հրապարակվել է բաց լիցենզիա տալու (հետ կանչելու) մասին հայտարարություն (թվականը)»:

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

12) արտոնագրատիրոջ անվան, ազգանվան, հայրանվան, անվանման և(կամ) բնակության (գտնվելու վայրի) հասցեի փոփոխության դեպքում՝

«Արտոնագրատիրոջ անունը, ազգանունը, անվանումը և (կամ) բնակության (գտնվելու) վայրը փոփոխվել է՝ (նշվում է նոր արտոնագրատիրոջ անունը, ազգանունը, անվանումը, բնակության կամ գտնվելու վայրի հասցեն):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:».

13) ներկայացուցչի փոփոխության կամ նոր ներկայացուցչի նշանակման դեպքում՝

«Ներկայացուցիչը (անունը, ազգանունը, անվանումը), բնակության կամ գտնվելու վայրի հասցեն փոխվել է (նշվում է նոր անունը, ազգանունը, անվանումը), բնակության կամ գտնվելու վայրի հասցեն), կամ՝

նշանակվել է նոր ներկայացուցիչ (անունը, ազգանունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:»,

14) արտոնագրի կրկնակ տալու դեպքում՝

«Տրված է կրկնակ (թվականը):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:»:

18. Եթե կատարված են «Արտոնագրերի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանները, պետական գրանցամատյանների բաժինը արտոնագրատիրոջը տալիս է լրացուցիչ պահպանության վկայագիր՝ համաձայն սույն կարգով սահմանված Ձև 4-ի և դրա մասին տեղեկությունները գրանցում է գյուտերի պետական գրանցամատյանում:

3. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՐՏՈՆԱԳՐՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԳՅՈՒՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՈՒՄԸ

19. Ըստ արտոնագրերի հերթական համարների, որոնք ըստ էության կարճաժամկետ արտոնագրով պահպանվող գյուտերի (այսուհետ՝ սույն գլխում՝ գյուտեր) գրանցման համարներն են, գյուտերի մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերի ՄՍՀԿ ST.9 ստանդարտին համապատասխան, Գրասենյակի գյուտերի ընթացիկ հիմնապաշարից գործավարության ծրագրով գրանցամատյան են տեղափոխվում հետևյալ մատենագիտական տվյալները՝

1) (11) արտոնագրի համարը.

2) (13) փաստաթղթի (արտոնագրի) տեսակի կոդը.

3) (21) հայտի գրանցման համարը.

4) (22) հայտի գրանցման (ներկայացման) թվականը.

5) (31) առաջնային հայտի համարը.

6) (32) առաջնային հայտի ներկայացման թվականը.

7) (33) առաջնային հայտի ներկայացման երկրի կոդը.

8) (45) արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը.

9) (51) միջազգային արտոնագրային դասակարգման ցուցիչը.

10) (54) գյուտի անվանումը.

11) (57) հավակնության սահմանումը.

12) (62) ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատվել է հայտը.

13) (65) հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը.

14) (71) տեղեկություններ հայտատու(ներ)ի մասին (անունը, ազգանունը, անվանումը), հասցեն, երկրի կոդը).

15) (72) տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին (անունը, ազգանունը, հասցեն, երկրի կոդը).

16) (73) տեղեկություններ արտոնագրատիրոջ մասին (անունը, ազգանունը, անվանումը), հասցեն, երկրի կոդը).

17) (74) տեղեկություններ արտոնագրային հավատարմատարի մասին, եթե այն նշված է դիմումում.

18) (85) միջազգային հայտն ազգային փուլ փոխադրելու թվականը.

19) (86) միջազգային հայտի համարն ու ներկայացման թվականը.

20) (87) միջազգային հայտի հրապարակման համարն ու թվականը.

21) (98) նամակագրության հասցեն:

20. «Արտոնագրերի մասին» օրենքի համաձայն արտոնագիր տալու մասին որոշման հիման վրա արտոնագիր տալու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարման դեպքում Գրասենյակը գյուտը գրանցում է համապատասխան պետական գրանցամատյանում և տալիս է արտոնագիր: Գյուտը պետական գրանցամատյանում գրանցելու և արտոնագիր տալու համար համար Գրասենյակի պետական գրանցամատյանների բաժինը իրականացնում է հետևյալ գործողությունները՝

1) որոշում է արտոնագրի համարը.

2) գրանցում (ներմուծվում) են գյուտի մատենագիտական տվյալները.

3) որպես արտոնագրի հրապարակման թվական նշում է այն պաշտոնական տեղեկագրի հրապարակման թվականը, որի մեջ զետեղված են տվյալ գյուտի արտոնագրի մասին տեղեկությունները.

4) պատրաստում (լրացնում) է արտոնագիրը և այն հանձնում (առաքում) է արտոնագրատիրոջը կամ նրա ներկայացուցչին.

5) լրացվում են արտոնագրի տրման (առաքման) մասին տեղեկությունները (թվականը և ստացողի կամ հասցեատիրոջ անունը, ազգանունը, անվանումը, առաքման տվյալները):

21. Տեղեկությունների հրապարակումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Գրասենյակն արտոնագրատիրոջը կամ նրա ներկայացուցչին հանձնում է (անհրաժեշտության դեպքում՝ ուղարկում է փոստով) արտոնագիրը:

22. Գրանցման ենթակա գյուտերի արտոնագրերի համարները որոշելու և դրանց մասին տեղեկությունները Գրասենյակի պաշտոնական տեղեկագրի հերթական համարում հրապարակելու նպատակով, Գրասենյակի գյուտերի հայտերի գործավարության ընթացիկ հիմնապաշարից գրանցման ենթակա գյուտերը ծրագրով դասավորվում են ըստ Միջազգային արտոնագրային

դասակարգման և ստանում են հերթական համարներ՝ սկսած գրանցամատյանում վերջինը գրանցված գյուտին տրված արտոնագրի համարին հաջորդող համարից:

23. Եթե հեղինակի (համահեղինակների) մասին տեղեկություններն օրենքի համաձայն պաշտոնական տեղեկագրում չեն հրապարակվում, ապա գրանցամատյանում համապատասխան ազգանուն(ներ)ից հետո կատարվում է «չի հրապարակվում» գրառումը:

24. Բաց լիցենզիա տալու մասին դիմում ստանալու, ինչպես նաև բաց լիցենզիա տալու մասին դիմումը հետ կանչելու վերաբերյալ դիմում ստանալու դեպքում, եթե դիմումին կցված է համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը, համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանի տվյալ արտոնագրի էջում, և այդ մասին տեղեկություն է հրապարակվում Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում, ինչի մասին ծանուցվում է արտոնագրատերը: Եթե դիմումը ներկայացվել է առանց համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի, կամ վճարված տուրքը չի համապատասխանում սահմանված չափին, ապա արտոնագրատիրոջը հարցում է ուղարկվում համապատասխան չափով տուրքի վճարման անդորրագիրը եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ: Պահանջված անդորրագիրը եռամսյա ժամկետում չներկայացնելու դեպքում՝ դիմումը համարվում է չներկայացված:

25. Գրանցամատյանի վարման ընթացքում պետական գրանցամատյանների բաժինը գրանցամատյան է մուտքագրում սույն կարգի 15-րդ կետով սահմանված տեղեկությունները:

26. Սույն կարգի 15-րդ կետին համապատասխան գրանցամատյանում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում կամ կայքէջում:

27. Ըստ սույն կարգի 15-րդ կետում նշված գործողությունների, գրանցամատյանում գրառումները կատարվում են սույն կարգի 17-րդ կետով սահմանված տեքստերով:

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՈՒՄԸ

28. «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի համաձայն արդյունաբերական դիզայնի գրանցման արտոնագիր տալու մասին որոշման հիման վրա, արտոնագիր տալու համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրն ստանալուց հետո արդյունաբերական դիզայնը

գրանցվում է արդյունաբերական դիզայնների պետական գրանցամատյանում (այսուհետ՝ սույն գլխում՝ գրանցամատյան), որի համար իրականացվում են հետևյալ գործողությունները՝

1) որոշվում է արտոնագրի համարը.

2) գրանցվում (ներմուծվում) են արդյունաբերական դիզայնի մատենագիտական տվյալները.

3) որպես արտոնագրի հրապարակման թվական նշվում է այն պաշտոնական տեղեկագրի հրապարակման թվականը, որի մեջ զետեղված են տվյալ արդյունաբերական դիզայնի գրանցման մասին տեղեկությունները.

4) պատրաստվում (լրացվում) է արտոնագիրը և այն հանձնվում (առաքվում) է արտոնագրատիրոջը կամ նրա ներկայացուցչին.

5) լրացվում են արտոնագրի հանձնման (առաքման) մասին տեղեկությունները (թվականը և ստացողի կամ հասցեատիրոջ ազգանունը, անունը (անվանումը), առաքման տվյալները)։

29. Գրանցման ենթակա արդյունաբերական դիզայնների արտոնագրերի համարները որոշելու և դրանց մասին տեղեկությունները Գրասենյակի պաշտոնական տեղեկագրի հերթական համարում հրապարակելու նպատակով, Գրասենյակի գործավարության ընթացիկ հիմնապաշարից գրանցման ենթակա արդյունաբերական նմուշները ծրագրով դասավորվում են ըստ միջազգային դասակարգման և ստանում են հերթական համարներ՝ սկսած գրանցամատյանում վերջինը գրանցված արդյունաբերական դիզայնին տրված արտոնագրի համարին հաջորդող համարից։

30. Ըստ արդյունաբերական դիզայնների հերթական համարների, որոնք ըստ էության արդյունաբերական դիզայնների պետական գրանցման համարներն են, արդյունաբերական դիզայնների մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերի ՄՄՀԿ ST.9 ստանդարտին համապատասխան, Գրասենյակի՝ արդյունաբերական դիզայնների գործավարության ընթացիկ հիմնապաշարից ծրագրով գրանցամատյան են տեղափոխվում հետևյալ մատենագիտական տվյալները՝

1) (11) արտոնագրի համարը.

2) (13) փաստաթղթի տեսակի (արտոնագրի) կոդը.

3) (21) հայտի գրանցման համարը.

4) (22) հայտի գրանցման (ներկայացման) թվականը.

5) (31) առաջնային հայտի համարը.

6) (32) առաջնային հայտի ներկայացման թվականը.

7) (33) առաջնային հայտի ներկայացման երկրի կոդը.

8) (45) արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը.

9) (51) միջազգային դասակարգման ցուցիչը.

10) (54) արդյունաբերական դիզայնի անվանումը.

11) (55) արդյունաբերական դիզայնի պատկերը.

12) (62) ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատվել է հայտը.

13) (65) հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը.

14) (71) տեղեկություններ հայտատուի(ների) մասին (անունը, ազգանունը, անվանումը, հասցեն, երկրի կոդը).

15) (72) տեղեկություններ հեղինակի(ների) մասին (անունը, ազգանունը, հասցեն, երկրի կոդը).

16) (73) տեղեկություններ արտոնագրատիրոջ մասին (անունը, ազգանունը, կամ անվանումը, հասցեն, երկրի կոդը).

17) (74) տեղեկություններ արդյունաբերական դիզայնների հավատարմատարի մասին, եթե այն նշված է դիմումում.

18) (98) նամակագրության հասցեն:

31. Եթե հեղինակի (համահեղինակների) մասին տեղեկություններն օրենքի համաձայն պաշտոնական տեղեկագրում չեն հրապարակվում, ապա գրանցամատյանում համապատասխան ազգանուն(ներ)ից հետո կատարվում է «չի հրապարակվում» գրառումը:

32. Բաց լիցենզիա տալու մասին դիմում ստանալու, ինչպես նաև բաց լիցենզիա տալու մասին դիմումը հետ կանչելու վերաբերյալ դիմում ստանալու դեպքում, եթե դիմումին կցված է օրենքով սահմանված տուրքի վճարման անդորրագիրը, համապատասխան գրառում է կատարվում արդյունաբերական դիզայնների պետական գրանցամատյանի տվյալ արտոնագրի էջում և այդ մասին տեղեկություն է հրապարակվում Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում, ինչի մասին ծանուցվում է արտոնագրատերը: Եթե դիմումը ներկայացվել է առանց համապատասխան տուրքի վճարման անդորրագրի, կամ վճարված տուրքը չի համապատասխանում սահմանված

չափին, ապա արտոնագրատիրոջը հարցում է ուղարկվում համապատասխան չափով տուրքի վճարման անդորրագիրը եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ: Պահանջված անդորրագիրը եռամսյա ժամկետում չներկայացնելու դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

33. Գրանցամատյանի վարման ընթացքում բաժինը գրանցամատյան մուտքագրում է հետևյալ տեղեկությունները՝

1) գրանցամատյանում տեղ գտած ակնհայտ և տեխնիկական սխալներն ուղղելու մասին.

2) արդյունաբերական դիզայնը պետական գրանցամատյանից հանելու մասին՝

ա. արդյունաբերական դիզայնի գրանցումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու մասին,

բ. արտոնագրատիրոջ դիմումի համաձայն արտոնագրով տրված իրավունքները ամբողջությամբ դադարեցնելու մասին,

գ. արտոնագրի ժամկետը չերկարաձգելու պատճառով արտոնագրով տրված իրավունքները դադարեցնելու մասին,

դ. արտոնագրի ժամկետը լրանալու մասին.

3) արդյունաբերական դիզայնի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու կամ դադադարեցնելու մասին.

4) արտոնագրատիրոջ դիմումի համաձայն արտոնագրով տրված իրավունքները մասնակիորեն դադարեցնելու մասին.

5) արտոնագրատիրոջ կողմից արտոնագրի ժամկետը երկարաձգելու համար տուրքերը վճարելու և իրավունքների տրամադրման ժամկետը երկարաձգելու մասին.

6) արդյունաբերական դիզայնի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին.

7) արդյունաբերական դիզայնի նկատմամբ իրավունքների փոխանցման մասին գրանցված պայմանագրի մասին.

8) գրանցված լիցենզային (ենթալիցենզային) պայմանագրի մասին.

9) գրանցված ֆրանչայզինգի պայմանագրի մասին.

10) գրանցված լիցենզային կամ ֆրանչայզինգի պայմանագրում կատարված փոփոխությունների մասին.

11) գրանցված լիցենզային կամ ֆրանչայզինգի պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին.

12) բաց լիցենզիայի մասին հայտարարություն հրապարակելու մասին.

13) արտոնագրատիրոջ անվան, ազգանվան, հայրանվան կամ անվանման, և(կամ) բնակության (կամ գտնվելու վայրի) հասցեի փոփոխության, արտոնագրատիրոջ ներկայացուցչի անվան, ազգանվան, հայրանվան (կամ անվանման), և (կամ) բնակության (կամ գտնվելու վայրի) հասցեի փոփոխության, մասին.

14) ներկայացուցչի փոփոխության կամ նոր ներկայացուցիչ նշանակելու մասին.

15) արտոնագրի կրկնակ տալու մասին.

16) այլ փոփոխությունների մասին:

34. Սույն կարգի 33-րդ կետին համապատասխան գրանցամատյանում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում կամ կայքէջում:

35. Ըստ սույն կարգի 33-րդ կետում նշված գործողությունների, գրանցամատյանում գրառումները կատարվում են հետևյալ տեքստերով՝

1) գրանցամատյանում տեղ գտած ակնհայտ և տեխնիկական սխալներն ուղղելու դեպքում՝

ա. «Ուղղված է ակնհայտ (տեխնիկական) սխալը (նշվում է ճիշտ գրառումը):

Հիմքը՝ (նշվում է համապատասխան հիմքը և դրա ստացման թվականը):

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:».

2) արդյունաբերական դիզայնը պետական գրանցամատյանից հանելու դեպքում՝

«արդյունաբերական դիզայնը հանվել է պետական գրանցամատյանից _____ թվականից,

հիմքը՝

ա. դատարանի վճռի հիման վրա արտոնագիրն ամբողջովին անվավեր է ճանաչվել (նշվում է դատական գործի համարը, վճռի թվականը, ուժի մեջ մտնելու թվականը), կամ՝

բ. չի երկարաձգվել գործողության ժամկետը, կամ՝

գ. արտոնագրատիրոջ _____թվականի դիմումը, կամ

դ. լրացել է արտոնագրի գործողության ժամկետը:

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

3) արտոնագիրը մասնակիորեն անվավեր ճանաչվելու կամ դադարեցվելու դեպքում՝

ա. «Արտոնագիրը մասնակիորեն անվավեր է ճանաչվել (նշվում է անվավեր ճանաչման ծավալը):

Հիմքը՝ դատարանի վճիռը (նշվում է դատական գործի համարը, վճռի թվականը, ուժի մեջ մտնելու թվականը):

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը», կամ՝

բ. «Արտոնագրով տրված իրավունքները մասնակիորեն (նշվում է դադարեցման ծավալը) դադարեցվել են (թվականը):

Հիմքը՝ արտոնագրատիրոջ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

4) արտոնագրատիրոջ կողմից երկարաձգման համար տուրքերը վճարելու և իրավունքների պահպանության ժամկետը ամբողջությամբ կամ մասնակիորեն երկարաձգելու դեպքում՝

ա. «Արտոնագիրը գործում է մինչև (թվականը), կամ՝

Արտոնագիրը (նշվում է երկարաձգված ծավալը) գործում է մինչև (թվականը):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը (գրությունը):

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:»

5) արտոնագրի գործողությունը վերականգնելու դեպքում՝

ա. «Արտոնագրի գործողությունը վերականգնվել է (թվականից):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

6) արդյունաբերական դիզայնի նկատմամբ իրավունքների փոխանցման մասին պայմանագիրը գրանցելու դեպքում՝

ա. «Արտոնագրատերը (անունը, ազգանունը կամ անվանումը) և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն) գյուտի նկատմամբ իրավունքները ամբողջությամբ կամ մասնակի (նշվում է փոխանցվող ծավալը) փոխանցվել է պայմանագրով (գրանց. №, թվականը):

Նոր արտոնագրատեր՝ (անունը, ազգանունը, կամ անվանումը) և բնակության կամ գտնվելու վայրի հասցեն):

Հիմքը՝ պայմանագիրը գրանցելու մասին որոշում, №, (առաքման կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները):

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

7) լիցենզիան (ենթալիցենզիան) ամբողջությամբ կամ մասնակի գրանցելու դեպքում՝

ա. «Լիցենզիան (ենթալիցենզիան) (գրանց. № , թվականը) գործում է մինչև (թվականը), կամ՝

«Լիցենզիան (ենթալիցենզիան) (նշվում է ծավալը) (գրանց. № , թվականը) գործում է մինչև (թվականը):

Լիցենզառու (ենթալիցենզառու) (անունը, ազգանունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը):

Լիցենզայի տեսակը՝ բացառիկ (հասարակ, հարկադիր):

Հիմքը՝ լիցենզիան գրանցելու մասին որոշում կամ դատարանի որոշում, ծանուցագիր № , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները):

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

8) ֆրանչայզինգի պայմանագիրը գրանցելու դեպքում՝

ա. «Ֆրանչայզինգը (ենթալիցենզիան) (գրանց. № , թվականը) գործում է մինչև (թվականը):

Լիցենզառու (ենթալիցենզառու) (անունը, ազգանունը, կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը):

Լիցենզայի տեսակը՝ բացառիկ (հասարակ):

Հիմքը՝ լիցենզիան գրանցելու մասին որոշում, ծանուցագիր № , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները):

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

9) լիցենզիայում (ենթալիցենզիայում) կամ ֆրանչայզինգի պայմանագրում կատարված փոփոխությունները գրանցելու դեպքում՝

ա. «Փոփոխություն (գրանց. № , թվականը), (լիցենզիայի, ենթալիցենզիայի կամ ֆրանչայզինգի (գրանց. № , թվականը) պայմանագրում:

Պայմանագրի գործողությունը երկարաձգված է մինչև (թվականը):

Հիմքը՝ փոփոխության (ների) գրանցման մասին որոշում (գրանց. № , թվականը), ծանուցագիր № , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները):

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

10) լիցենզիան կամ ֆրանչայզինգի պայմանագիրը չեղյալ հայտարարելու դեպքում՝

ա. «Լիցենզիայի, ենթալիցենզիայի կամ ֆրանչայզինգի (գրանց. № , թվականը) պայմանագիրը չեղյալ է հայտարարվել է (թվականից),

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը (կողմերի համատեղ ստորագրած փաստաթուղթը, դատարանի վճիռը և այլն),

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

11) բաց լիցենզիայի մասին հայտարարություն հրապարակելու դեպքում՝

ա. «Հրապարակվել է բաց լիցենզիա տալու (հետ կանչելու) մասին հայտարարություն (թվականը)»:

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:

Հրապարակված է՝ պաշտոնական տեղեկագիր № , թվականը:».

12) արտոնագրատիրոջ անվան, ազգանվան, հայրանվան կամ անվանման և (կամ) բնակության (գտնվելու վայրի) հասցեի փոփոխության դեպքում՝

ա. «Արտոնագրատիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը և (կամ) բնակության (գտնվելու) վայրը փոփոխվել է՝ (նշվում է նոր արտոնագրատիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:».

13) ներկայացուցչի փոփոխության կամ նոր ներկայացուցչի նշանակման դեպքում՝

ա. «Ներկայացուցիչը (անունը, ազգանունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը) փոխվել է (նշվում է նոր անունը, ազգանունը կամ անվանումը), բնակության կամ գտնվելու վայրը), կամ՝

նշանակվել է նոր ներկայացուցիչ (անունը, ազգանունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,

Գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը:»,

14) արտոնագրի կրկնակ տալու դեպքում՝

ա. «Տրված է կրկնակ (թվականը):

Հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը:

Գրառումը կատարող անձի անունը և ազգանունը, գրառման թվականը:»:

5. ԳՅՈՒՏԵՐԻ, ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱՐՏՈՆԱԳՐՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԳՅՈՒՏԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

36. Օրենքների համաձայն իրավունքներին և արտոնագրատեր(եր)ին վերաբերող տվյալների հետագա փոփոխությունները պետական գրանցամատյան մուտքագրվում են համապատասխան դիմումի համաձայն, իսկ իրավունքների փոխանցման և լիցենզիաների (ֆրանչայզինգի) տրամադրման մասին տվյալները համապատասխան գրանցամատյան մուտքագրվում են պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի համաձայն:

37. Մեկ դիմումով կարող է խնդրարկվել համապատասխան գրանցամատյանում կատարել մեկից ավելի փոփոխություն: Մեկ դիմումը բավարար է նաև այն դեպքում, երբ փոփոխությունները խնդրարկվում են մեկից ավելի տրված փաստաթղթերի և (կամ) միևնույն անձի իրավունքի համար՝ պայմանով, որ փոփոխությունը կամ փոփոխությունները նույնը լինեն

քննարկվող բոլոր տրված փաստաթղթերի համար և բոլոր տրված փաստաթղթերի համարները նշված լինեն դիմումում:

38. Արտոնագրատերը Գրասենյակին պետք է տեղեկացնի հետևյալի մասին՝

1) արտոնագրատիրոջ անվանման (անվան, ազգանվան) կամ գտնվելու վայրի (բնակության վայրի) փոփոխության.

2) արտոնագրատիրոջ ներկայացուցչի և (կամ) նրա գտնվելու վայրի (բնակության վայրի) փոփոխության.

3) արտոնագրատիրոջ փոփոխության.

4) տեխնիկական վրիպակներն ուղղելու:

39. Փոփոխությունները կատարվում են արտոնագրատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգով սահմանված N 5 և N 6 ձևերի: Դիմումները Գրասենյակ ներկայացվում է առձեռն կամ Գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով:

40. Դիմումը լրացնելու համար կիրառվում են հետևյալ կանոնները.

1) դիմումում լրացված տվյալները պետք է համապատասխանեն պետական գրանցամատյանի տվյալներին,

2) եթե մեկ դիմումով խնդրարկվում է երկու և ավելի արտոնագրում կատարել փոփոխություն, այս դեպքում աճման կարգով նշվում են այն գրանցումների համարները, որոնց մեջ կատարվում են փոփոխությունները (2.2-րդ կետը նշվում է, եթե գրանցումների համարները տրվում են առանձին թերթի վրա),

3) 6.1-ին կետում նշվում է փոփոխվող տվյալը, օրինակ՝ «Արտոնագրատիրոջ անվանումը», իսկ 6.2-րդ կետում՝ համապատասխան տվյալը՝ փոփոխված տեսքով:

41. Ներկայացված դիմումը քննարկվում է այն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պարզվում է, որ այն ներկայացվել է առանց պետական տուրքի վճարման անդորրագրի, ապա այն քննարկման չի ընդունվում, ինչի մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է դիմումատուին: Եթե վճարված գումարը չի համապատասխանում սահմանված պետական տուրքի չափին, ապա արտոնագրատիրոջը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ պակաս վճարված գումարը եռամսյա ժամկետում

վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու առաջարկությամբ: Այս դեպքում փոփոխություն կատարելու համար օրենքով սահմանված ժամկետի ընթացքը դադարեցվում է մինչև ծանուցման պատասխանի ստացումը: Նշված ժամկետում այդ գումարը չվճարվելու և անդորրագիրը Գրասենյակ չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

42. Դիմումը քննարկման ընդունելու դեպքում՝ առաջարկվող փոփոխությունները Գրասենյակը հաշվի է առնում և դրանց հիման վրա համապատասխան գրառումներ կատարելու միջոցով փոփոխություններ է կատարում պետական գրանցամատյանում ու արտոնագրում (առկայության դեպքում), եթե այդ փոփոխությունները համապատասխանում են օրենքներով սահմանված պահանջներին և օրենքների համաձայն համապատասխան ապացույցներ պահանջելու հիմքեր չկան:

43. Եթե արտոնագիրը դիմումին կից չի ներկայացվել, ապա արտոնագրատիրոջը կամ նրա ներկայացուցչին հանձնվում կամ փոստով ուղարկվում է պետական գրանցամատյանից համապատասխան քաղվածք:

44. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է ներկայացված նյութերի համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին, մասնավորապես, ներկայացված արտոնագրի վավերականությունը, դիմումի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին և դրանում նշված տվյալների (արտոնագրատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը) համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին, ինչպես նաև վճարված պետական տուրքի համապատասխանությունն օրենքով սահմանված դրույքաչափերին: Եթե դիմումը ներկայացվել է լիազորված անձի միջոցով, ապա ստուգվում է նաև լիազորագրի առկայությունը և դրա համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին: Օրենքով սահմանված պետական տուրքը նվազեցված դրույքաչափով վճարման դեպքում դիմումից կցվում է նաև արտոնագրատիրոջ կողմից տրված աշխատողների թվաքանակի վերաբերյալ տեղեկանք՝ վճարման օրվա դրությամբ: Արտոնագրատիրոջ անվանման փոփոխության դեպքում դիմումին կից ներկայացվում է այդ փոփոխությունը հաստատող փաստաթուղթը:

45. Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում կարգի 39-րդ, 40-րդ և 43-րդ կետերով սահմանված պահանջներին կամ եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ էլեկտրոնային վճարման դեպքում՝ վճարման հանձնարարականը, ապա գանձապետական

առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ կամ ճշգրտված կամ բացակայող նյութերը կամ ապացույցները եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ: Այս դեպքում պահանջված նյութերը համարվում է ներկայացված դրանցից վերջինի ստացման օրով:

46. Երեք ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու կամ ճշգրտված կամ բացակայող նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը մերժվում և մերժման մասին որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմողին:

47. Պետական գրանցամատյանում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանում գրառում կատարելու թվականից, և գրասենյակի կողմից հրապարակվում են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում կամ կայքէջում:

48. Սույն գլխով նախատեսված՝ Գրասենյակի կողմից կատարված հարցումները կամ քաղվածքներն ուղարկվում են դիմողին նրա կողմից փաստաթղթի ներկայացման համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրած եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

6. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Պետական գրանցամատյանից քաղվածքը (քաղվածքները) տրամադրվում է տրված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգով սահմանված N 7 և N 8 ձևերի, որը համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի հետ միասին գրասենյակ է ներկայացվում ցանկացած անձի կողմից (դիմող): Քաղվածքում նշվում են սույն կարգի 9-րդ, 19-րդ և 30-րդ կետերում նշված տվյալները:

50. Դիմումը լրացվում է հետևյալ կարգով՝

1) 2.1-ին կետում նշվում է գյուտի, կարճաժամկետ արտոնագրով պահպանվող գյուտի, արդյունաբերական դիզայնի պետական գրանցման համարը.

2) 3.1-ին կետում նշվում են դիմողի անվանումը, եթե նա իրավաբանական անձ է, կամ անունը, ազգանունը, եթե նա ֆիզիկական անձ է: Ֆիզիկական անձի դեպքում անվան և ազգանվան հետ միասին կարող է նշվել նաև հայրանունը.

3) 4-րդ կետում նշվում են ներկայացված դիմումով նամակագրություն վարելու և դիմումի քննարկման ընթացքում արտոնագրատիրոջ կամ նրա ներկայացուցչի հետ (նշանակված լինելու դեպքում) անմիջական կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները՝ փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն.

4) 5-րդ կետում նշվում է տրամադրվող քաղվածքի տեսակը, ընդ որում՝

ա. 5.1-ին կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ խնդրարկվում է սովորական քաղվածք՝ առանց պետական գրանցամատյանում կատարված փոփոխությունների նշման,

բ. 5.2-րդ կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ խնդրարկվում է ընդլայնված քաղվածք, որը ներառում է այդ գրանցմանը վերաբերող՝ պետական գրանցամատյանում կատարված բոլոր փոփոխությունները և գրառումները, այդ թվում՝ նաև տվյալներ արտոնագրատիրոջ փոփոխության և լիցենզիայի գրանցման մասին,

գ. 6-րդ կետում լրացվում են դրա ստորագրմանը վերաբերող տվյալները՝ դիմումն ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը՝ նշելով նրա անունը, ազգանունը (ցանկության դեպքում՝ նաև հայրանունը) կամ անվան (հայրանվան) սկզբնատառերը, ազգանունը և պաշտոնը,

դ. 6.1-ին կետում նշվում է ստորագրման թվականը,

ե. 7-րդ կետում նշվում է (նշվում են) տվյալներ վճարված պետական տուրքի մասին՝ լրացվում է վճարված պետական տուրքի չափը՝ թվերով,

զ. 7.1-ին կետում նշվում է վճարման ձևը, օրինակ՝ բանկային անկանխիկ փոխանցում:

51. Սույն գլխում նշված դիմումները դիմողը Գրասենյակ կարող է ներկայացնել առձեռն կամ Գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով:

52. Եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ էլեկտրոնային վճարման դեպքում՝ վճարման հանձնարարականը,

ապա գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով Գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ ապացույցները եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

53. Երեք ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում դիմումը մերժվում և մերժման մասին որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմողին:

54. Սույն գլխով նախատեսված՝ Գրասենյակի կողմից կատարված հարցումները կամ քաղվածքներն ուղարկվում են դիմողին նրա կողմից փաստաթղթի ներկայացման համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրած եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

7 ԱՐՏՈՆԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՋ ՆՇՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

55. Գյուտի արտոնագիրը՝ համաձայն սույն կարգով սահմանված N 1 ձևի, գյուտի կարճաժամկետ արտոնագիրը՝ համաձայն սույն կարգով սահմանված N 2 ձևի, արդյունաբերական դիզայնի արտոնագիրը՝ համաձայն սույն կարգով սահմանված N 3 ձևի, լրացվում է պետական գրանցամատյանների բաժնի կողմից՝ համապատասխան գրանցամատյանի տվյալների հիման վրա և ստորագրվում է Գրասենյակի ղեկավարի կողմից: Գրասենյակի ղեկավարի ստորագրությունը հաստատվում է Գրասենյակի կնիքով:

56. Արտոնագրի ձևաթուղթը լրացնելիս՝

1) արտոնագրի N -ից հետո դրվում է համապատասխան արտոնագրի համարը (11).

2) «Մտավոր սեփականության գրասենյակը օրենքի համաձայն տվեց» բառերից հետո նշվում է օբյեկտի լրիվ անվանումը (54).

3) «արտոնագրատեր» բառից հետո նշվում է արտոնագրատիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը՝ ուղղական հոլովով, մեկից ավելի արտոնագրատերերի դեպքում՝ այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ նշված է գրանցամատյանում.

4) «հեղինակ (ներ)» բառից հետո նշվում է հեղինակի (համահեղինակների) անունը, ազգանունը՝ ուղղական հոլովով, այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ նշված է գրանցամատյանում.

5) «Հայտի» N -ից հետո նշվում է հայտի գրանցման համարը (21).

6) «Ներկայացման թվականը» բառերից հետո նշվում է հայտի ներկայացման թվականը (22).

7) «Գյուտի առաջնությունը» բառերից հետո նշվում է խնդրարկված առաջնությունը (32): Եթե խնդրարկվում է մի քանի առաջնություն, ապա նշվում են բոլորը: Եթե առաջնություն չի խնդրարկվել, ապա լրացվում է հայտի ներկայացման թվականը (22).

8) «Գրանցված է պետական գրանցամատյանում» բառերից հետո նշվում է գրանցամատյանում գրանցման թվականը (հրապարակման թվականը (44) կամ (45)):

57. Գյուտի (գյուտի կարճաժամկետ) արտոնագրի ձևաթղթին կցվում է դրա պաշտոնական հրատարակության նկարագրությունը և հավակնության սահմանումը և դրանք հանձնվում են (անհրաժեշտության դեպքում ուղարկվում են փոստով) արտոնագրատիրոջը:

58. Արդյունաբերական դիզայնի արտոնագրի ձևաթուղթը լրացնելիս՝

1) արտոնագրի N -ից հետո դրվում է համապատասխան արտոնագրի համարը (11).

2) «Մտավոր սեփականության գրասենյակը օրենքի համաձայն տվեց» բառերից հետո նշվում է օբյեկտի լրիվ անվանումը (54).

3) «արտոնագրատեր» բառից հետո նշվում է արտոնագրատիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը՝ ուղղական հոլովով, մեկից ավելի արտոնագրատերի դեպքում՝ այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ նշված է գրանցամատյանում.

4) «հեղինակ (համահեղինակներ)» բառից հետո նշվում է հեղինակի (համահեղինակների) անունը, ազգանունը՝ ուղղական հոլովով, այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ նշված է գրանցամատյանում.

5) «Հայտի» N -ից հետո նշվում է հայտի գրանցման համարը (21).

6) «Ներկայացման թվականը» բառերից հետո նշվում է հայտի ներկայացման թվականը (22).

7) «Արդյունաբերական դիզայնի առաջնությունը» բառից հետո նշվում է խնդրարկված առաջնությունը (32)։ Եթե խնդրարկվում է մի քանի առաջնություն, ապա նշվում են բոլորը։ Եթե առաջնություն չի խնդրարկվել, ապա լրացվում է հայտի ներկայացման թվականը (22).

8) «Գրանցված է պետական գրանցամատյանում» բառերից հետո նշվում է գրանցամատյանում գրանցման թվականը (հրապարակման թվականը (44) կամ (45))։

59. Արդյունաբերական դիզայնի արտոնագրի ձևաթղթին կցվում է իրի արտաքին տեսքի (ամբողջությամբ կամ մասնակիորեն) պատկերը։

60. Պետական գրանցամատյանների բաժինը արտոնագիրը հանձնելիս արտոնագրատիրոջն (արտոնագրատերերին) իրազեկ է պահում դրա գործողության ժամկետի, արտոնագրի գործողության ժամկետի երկարաձգման և այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների մասին, որոնք անհրաժեշտ է իմանալ տրված պահպանական փաստաթուղթն ուժի մեջ պահելու համար։

61. Արտոնագրի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում դրա կրկնակն ստանալու համար արտոնագրատերը կարող է դիմում ներկայացնել Գրասենյակ՝ կցելով օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը։ Գրասենյակը արտոնագրի կրկնակը տալիս է հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կիրառելով սույն կարգի 15-րդ կետում նշված մոտեցումները։

62. Արտոնագրի կրկնակը լրացվում է սույն կարգի 55-րդ կետի համաձայն, ընդ որում, դրա մեջ ներառվում են նախկինում կատարված բոլոր այն գրառումները, որոնք կրկնակը տալու պահին գործում են կամ վավերական են։ Տրված փաստաթղթի ձևաթղթի առաջին էջի վերևի աջ անկյունում կատարվում է (դրոշմվում է) «Կրկնակ» գրառումը։

Հայաստանի Հանրապետություն

ԱՐՏՈՆԱԳԻՐ

№

Մտավոր սեփական անության գրասենյակը
օրենքի համաձայն տվեց

գյուտի արտոնագիրը

ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ

ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)

ՀԱՅՏԻ №

Ներկայացման թվականը

Գյուտի առաջնությունը

Գրանցված է պետական

գրանցամատյանում

Գրասենյակի ղեկավար

Արտոնագրի ձևը սահմանվում է հանրապետական վերահսկողության մարմնի կողմից

Հայաստանի Հանրապետություն

ԱՐՏՈՆԱԳԻՐ

№

Մտավոր սեփականության գործակալությունը
օրենքի համաձայն տվել է

գյուտի կարճաժամկետ արտոնագիրը

ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ

ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)

ՀԱՅՏԻ №

Ներկայացման թվականը

Գյուտի առաջնությունը

Գրանցված է պետական

գրանցամատյանում

Գրասենյակի ղեկավար

Կիրառելի վերջնական մշակումների մասին տեղեկությունները գրանցվում է գյուտի ձևաչափով

Հայաստանի Հանրապետություն

ԱՐՏՈՆԱԳԻՐ

№

Մտավոր սեփական անության գրասենյակը
օրենքի համաձայն տվեց

արդյունաբերական դիզայնի արտոնագիրը

ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ

ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)

ՀԱՅՏԻ №

Ներկայացման թվականը

Արդյունաբերական դիզայնի
առաջնությունը

Գրանցված է պետական
գրանցամատյանում

Գրասենյակի ղեկավար

Արտոնագրի տեղեկությունները հրապարակվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայքում

Հայաստանի Հանրապետություն

ՎԿԱՅԱԳԻՐ

№

Մտավոր սեփականության գրասենյակը
օրենքի համաձայն տվեց

լրացուցիչ պահպանության վկայագիրը

ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ

ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)

ՀԱՅՏԻ №

Ներկայացման թվականը

Գործողության ժամկետը

Գրանցված է պետական

գրանցամատյանում

Գրասենյակի ղեկավար

Վկայագրի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում

Ձև 5

Դ Ի Մ ՈՒ Մ Գյուտերի պետական գրանցամատյանում փոփոխություն-ներ կատարելու մասին	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Հանրապետության հրապարակ,Կառավարական տուն, 3
1. Խնդրարկվում է ստորև նշված գրանցման մեջ կատարել սույն դիմումում նշված փոփոխությունները	(լրացնում է գործակալությունը)
2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցմանը (գրանցումներին) 2.1. գրանցման համարը (գրանցումների համարները)՝	
2.2. ☐ գրանցումների համարները տրված են առանձին թերթի վրա	
3. Արտոնագրատերը (արտոնագրատերերը) 3.1. (նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	
3.2. Արտոնագրատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը)՝	

Հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի հասցեն

3.3. ☐ մեկից ավելի արտոնագրատերեր (արտոնագրատերերի մասին տվյալներն ըստ 3.1-3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)

4. Արտոնագրատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. (նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը)

5. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)

6. Փոփոխությունը (փոփոխությունները)

6.1. տվյալները, որոնք պետք է փոփոխվեն՝	6.2. Փոփոխված տեսքով տվյալները

☐ 6.1-ին և 6.2-րդ կետերում նշված տվյալների շարունակությունը տրվում է առանձին թերթի վրա:

7. Ստորագրությունը _____

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

7.1. թվականը _____ 20 թ

7.2.. ստորագրողը ☐ արտոնագրատերն է ☐ արտոնագրատիրոջ ներկայացուցիչն է

8. ☐ Վճարված է դրամ պետական տուրք՝ ☐ անդորրագիրը կցվում է

9. ☐ Դիմումին կից ներկայացվում են լրացուցիչ թերթեր

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի թիվը)

Ձև 6

Դ Ի Մ ՈՒ Մ Արդյունաբերական դիզայնների պետական գրանցամատյանում փոփոխություններ կատարելու մասին	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Հանրապետության հրապարակ,Կառավարական տուն, 3
1. Խնդրարկվում է ստորև նշված գրանցման մեջ կատարել սույն դիմումում նշված փոփոխությունները	(լրացնում է գործակալությունը)
2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցմանը (գրանցումներին) 2.1. գրանցման համարը (գրանցումների համարները)՝	
2.2. ☐ գրանցումների համարները տրված են առանձին թերթի վրա	
3. Արտոնագրատերը (արտոնագրատերերը) 3.1. (նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	
3.2. Արտոնագրատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը)՝	

Հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի հասցեն

3.3. ☐ մեկից ավելի արտոնագրատերեր (արտոնագրատերերի մասին տվյալներն ըստ 3.1-3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)

4. Արտոնագրատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. (նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը)

5. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)

6. Փոփոխությունը (փոփոխությունները)

6.1. տվյալները, որոնք պետք է փոփոխվեն՝	6.2. Փոփոխված տեսքով տվյալները

☐ 6.1-ին և 6.2-րդ կետերում նշված տվյալների շարունակությունը տրվում է առանձին թերթի վրա:

7. Ստորագրությունը _____

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

7.1. թվականը _____ 20 թ

7.2.. ստորագրողը ☐ արտոնագրատերն է ☐ արտոնագրատիրոջ ներկայացուցիչն է

8. ☐ Վճարված է դրամ պետական տուրք՝ ☐ անդորրագիրը կցվում է

9. ☐ Դիմումին կից ներկայացվում են լրացուցիչ թերթեր

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի թիվը)

Ձև 7

Դ Ի Մ ՈՒ Մ պետական գրանցամատյանից քաղվածքներ տրամադրելու մասին	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3
1. Խնդրարկվում է տրամադրել քաղվածք (քաղվածքներ) գյուտերի պետական գրանցամատյանից՝ ստորև նշված գրանցման (գրանցումների) համար	(լրացնում է գործակալությունը)
2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցմանը (գրանցումներին) 2.1. գրանցման համարը (գրանցումների համարները)	
3. Դիմող 3.1. (նշվում է իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	
4. Նամակագրության հասցեն՝	

(փոստային հասցեն, հեռախոսահամարը , ֆաքսը , էլ. փոստի հասցեն)

5. Քաղվածքի տեսակը

☐ 5.1. սովորական քաղվածք

☐ 5.2. ընդլայնված քաղվածք՝ պետական գրանցամատյանում կատարված փոփոխություններով և գրառումներով

6. Ստորագրությունը _____

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

6.1. թվականը _____20 թ.

7. ☐ Վճարված է պետական տուրք, անդորրագիրը կցվում է

7.1. վճարման ձևը _____

Ձև 8

Դ Ի Մ ՈՒ Մ պետական գրանցամատյանից քաղվածքներ տրամադրելու մասին	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3
1. Խնդրարկվում է տրամադրել քաղվածք (քաղվածքներ) արդյունաբերական դիզայնների պետական գրանցամատյանից՝ ստորև նշված գրանցման (գրանցումների) համար	(լրացնում է գործակալությունը)
2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցմանը (գրանցումներին) 2.1. գրանցման համարը (գրանցումների համարները)	
3. Դիմող 3.1. (նշվում է իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	
4. Նամակագրության հասցեն՝ (փոստային հասցեն, հեռախոսահամարը , ֆաքսը , էլ. փոստի հասցեն)	

5. Քաղվածքի տեսակը

☐ 5.1. սովորական քաղվածք

☐ 5.2. ընդլայնված քաղվածք՝ պետական գրանցամատյանում կատարված փոփոխություններով և գրառումներով

6. Ստորագրությունը _____

_____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

6.1. թվականը _____20 թ.

7. ☐ Վճարված է պետական տուրք, անդորրագիրը կցվում է

7.1. վճարման ձևը _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ